

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայ բանասիրության ֆակուլտետ  
Հայոց լեզվի ամբիոն

Դասընթաց՝ *«Ժամանակակից հայերենի անվանական և բայական ձևակազմություն»*

Որակավորման աստիճան՝ մագիստրոսի կրթական ծրագիր

Կազմող՝ բ.գ.թ. Մ. Հ. Ֆելեքյան

ԵՐԵՎԱՆ

2015

## ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ժամանակակից հայերենի անվանական և բայական ձևակազմություն»-ը մասնագիտական դասընթաց է՝ նախատեսված Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների համար (առկա ուսուցում):

Դասընթացին հատկացված է 32 ժամ:

### Դասընթացի կառուցվածքը

- Դասընթացը բաղկացած է ներածությունից և երկու հիմնական մասերից:
- Ներածության մեջ ներկայացվում է լեզվաբանական կադապարի հասկացությունը, ըստ դասակարգման տարբեր հիմունքների՝ առանձնացվում են կադապարների տեսակները (ընդհանրական և առանձնական, լրիվ և մասնակի (թերի), հիմնական և լրացական (ստորադաս), համասեռ և ոչ համասեռ):

Ներածության մեջ են քննվում նաև ձևայինները և դրանց տեսակները և հիմքի հասկացությունը:

- Դասընթացի առաջին մասում ներկայացվում է ժամանակակից հայերենի անվանական ձևակազմությունը: Առանձնաբար քննվում են գոյականի և թվականի քերականական կարգերը և դրանց կազմության կադապարները:

- Երկրորդ հատվածում քննվում են դիմավոր բային (համադրական և վերլուծական ձևերին) բնորոշ քերականական կարգերը և դրանց կադապարումը:

- Դասընթացը ունի տեսագործնական բնույթ, ուստի տեսական նյութի մատուցումը ուղեկցվելու է գործնական աշխատանքների պարբերական կատարումով և ուսանողների համառոտ հաղորդագրությունների ընթերցմամբ և քննարկումներով:

### Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին առավել խորացված պատկերացում տալ ժամանակակից հայերենի անվանական (մասնավորապես՝ գոյականական և դերանվանական) և բայական համակարգերի կառուցվածքի մասին, ծանոթացնել լեզվաբանական վերլուծության արդի եղանակներին՝ հիմնվելով ակադ. Գ. Ջահուկյանի մշակած մեթոդների և եղանակների վրա:

Դասընթացի յուրացումը նաև կընդլայնի սովորողի պատկերացումները լեզվի համակարգայնության մասին:

## **Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- տեղյակ լինի արդի քերականագիտության կարևորագույն հասկացություններին, իմանա հիմնական տերմինաբանությունը,
- ձեռք բերի հմտություններ ձևաբանական վերլուծություններ կատարելու համար,
- կարողանա կազմել թեքվող խոսքի մասեր քերականական տարբեր ձևերի ընդհանրական և մասնավոր կաղապարները,
- ըստ տրված կաղապարների կարողանա կազմել գոյականների, դերանունների և բայերի բոլոր հնարավոր բառաձևերը:

## **ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

1. Լեզվական կաղապարի հասկացությունը:
  - 1.1. Ընդհանրական և առանձնական կաղապարներ:
  - 1.2. Լրիվ և մասնակի (թերի) կաղապարներ:
  - 1.3. Հիմնական և լրացական (ստորադաս) կաղապարներ:
  - 1.4. Համասեռ և ոչ համասեռ կաղապարներ:
2. Ձևային հասկացությունը:
  - 2.1. Հիմնական կամ արմատական ձևայիններ:
  - 2.2. Բառակազմական ձևայիններ կամ ածանցներ:
  - 2.3. Բառահարաբերական կամ բառաթեքական ձևայիններ (թեքայիններ, մասնիկներ):
3. Հիմքի հասկացությունը:
  - 3.1. Բառակազմական հիմք:
    - 3.1.1. Պարզ և բաղադրյալ հիմքեր:
    - 3.1.2. Սերող և բաղադրող հիմքեր:
    - 3.1.3. Հնչյունափոխական հիմքեր:
    - 3.1.4. Բառակապակցական հիմքեր:
    - 3.1.5. Բառաձևային հիմքեր:
    - 3.1.6. Հավելատարրային հիմքեր:
    - 3.1.7. Սղատարրային հիմքեր:
  - 3.2. Ձևաբանական հիմք:
    - 3.2.1. Մաքուր հիմք և ձևավոր հիմք:

- 3.2.2. Անփոփոխ-շեշտավոր հիմք:
- 3.2.3. Շեշտափոխված-անշեշտ հիմք:
- 3.2.4. Հնչութափոխված հիմք:
- 3.2.5. Մասնիկավոր հիմք:
- 4. Հարացույցի հասկացությունը:
- 5. Բառաձևի հասկացությունը:
- 6. Գոյականական բառաձևերի հարացույցը:
  - 6.1. Թվի կարգը և նրա կաղապարները:
  - 6.2. Հոլովի կարգը և նրա կաղապարները:
  - 6.3. Առկայացման կարգը և նրա կաղապարները:
- 7. Թեքվող դերանունների հարացույցը:
  - 7.1. Թվի կարգը:
  - 7.2. Հոլովի կարգը:
  - 7.3. Դեմքի կարգը:
- 8. Բայական բառաձևերի հարացույցը:
  - 8.1. Եղանակի կարգը:
  - 8.2. Սեռի կարգը:
  - 8.3. Ժամանակի կարգը:
  - 8.4. Դեմքի կարգը:
  - 8.5. Թվի կարգը:
  - 8.6. Համադրական բայաձևերի կաղապարները:
  - 8.7. Վերլուծական բայաձևերի կաղապարները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Ստուգումներն անցկացվելու են երեք մակարդակով՝

1. **Ուսանողի մասնակցություն.** սա ենթադրում է ուսանողների ներկայությունը դասախոսություններին և գործնական պարապմունքներին, ինչպես նաև նրանց ակտիվ ներգրավումը լսարանային քննարկումներին: Ընթացիկ հարցման արդյունքները գնահատականի տեսքով գրանցվելու են դասախոսի մատյանում: 18-20 միավոր կարող են ստանալ այն ուսանողները, ովքեր ներկա կգտնվեն դասախոսությունների առնվազն 80%-ին և ակտիվորեն կմասնակցեն գործնական աշխատանքների առնվազն 50%-ին: Կիսամյակի ընթացքում ուսանողը կարող է ներկայացնել գրավոր ռեֆերատներ կամ գիտական հաղորդագրումներ հինգ էջի սահմանում, որոնցում կքննարկվեն դասընթացում ընդգրկված խնդիրները:

2. **Ընթացիկ քննություններ.** առաջին ընթացիկ քննությունը բաղկացած է երկու տեսական հարցերից և երկու գործնական առաջադրանքից, երկրորդը՝ չորս գործնական հարցերից (հարցաթերթիկների նմուշները կցվում են):
3. **Բանավոր հարցում.** քննական գնահատականը որոշվելու է ընթացիկ քննությունների և բանավոր հարցման արդյունքում. քննությունը կանցկացվի հարցման ձևով՝ նախապես տրված հարցաշարի շրջանակներում և ուսանողի ներկայության խիստ հաշվառմամբ: Հարցատոմսում ընդգրկված կլինի 3 հարց, որոնցից 2-ը կլինեն տեսական հարցեր, իսկ 3-րդը՝ վարժություն: Վարժության գնահատականը համարժեք կլինի հարցատոմսի մեկ հարցի համար տրվող գնահատականին: Տեսական հարցերից մեկին կամ գործնական առաջադրանքին չպատասխանող ուսանողը չի կարող ստանալ 12 միավորից ավելի:

**«Ժամանակակից հայերենի անվանական և բայական ձևակազմություն»**  
**դասընթացի ընթացիկ քննությունների տեսական հարցերի հարցաշար**

1. Լեզվական կադապարի հասկացությունը և կադապարների տեսակները:
2. Ձևույթի հասկացությունը. ձևույթների տեսակները:
3. Հիմքի հասկացությունը:
4. Բառաձևի հասկացությունը:
5. Հարացույցի հասկացությունը:
6. Գոյականական բառաձևերի հարացույցը:
7. Թեքվող դերանունների հարացույցը:
8. Բայական բառաձևերի հարացույցը:

**«Ժամանակակից հայերենի անվանական և բայական ձևակազմություն»**  
**դասընթացի 1-ին ընթացիկ քննության հարցատոմսի նմուշ**

**I տարբերակ**

1. Լեզվական կադապարի հասկացությունը և կադապարների տեսակները:
2. Թեքվող դերանունների հարացույցը:
3. Տրված կադապարներով կազմել երկուական բառ (հիշել, որ **A**=արմատական ձևույթ, **a**=ժխտական նախածանց, **b**=ոչ ժխտական նախածանց, **c**=գոյականակերտ վերջածանց, **d**=ածականակերտ վերջածանց): [Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,25 միավոր, ընդամենը՝ 1 միավոր].

ա. Acd =

բ. abAc =

4. Կազմել հետևյալ բառաձևերի ձևակազմական կաղապարը (հիշել, որ **A**=հիմք, **a**=թվային իմաստով II-ական ձևույթ, **b**=I կարգի հոլովանիչ ձևույթ, **c**=II կարգի հոլովանիչ ձևույթ, **d**=հոդ): [Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,4 միավոր, ընդամենը՝ 1 միավոր].

*ընկերոջից =*

*գրքին =*

*գործերը =*

*գորգերի =*

*դասարանցիներից =*

**«Շամանակակից հայերենի անվանական և բայական ձևակազմություն»  
դասընթացի 2-րդ ընթացիկ քննության հարցատոմսի նմուշ**

**I տարբերակ**

1. Նշել հետևյալ հոլովանիչ թեքությունների գործածության պայմանները՝ ձևական, իմաստային, պատմական: [Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,1 միավոր, ընդամենը՝ 1 միավոր].

**n** (սիրո), **ու** (ձիու), **ու** (խաղալու), **ու** (Աստծու), **վան** (մահվան), **(ը)/ե** (դստեր), **ու/ա** (գրության), **ու/ա** (շան), **ք/ց** (Արևիկենց):

2. Տարբեր սյունակներում խմբավորել պարզ և բաղադրյալ հիմքեր ունեցող բառաձևերը [յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,04 միավոր, ընդամենը՝ 1 միավոր].

*Հայաստանում, ձիով, լսելի, դաշտում, հեռացրին, ծովից, գրեմ, բանաստեղծություններում, վառելիքով, նկարին, բարձրացրո՛ւ, ձիավորի, խաղա՛, սարին, գովաբանությունից, լեռան, վերամիավորվեցինք, պարեի, աշխատի՛ր, գործարաններից, մոտեցրե՛ք, պատմես, գտնես, առաջարկությամբ, ձիապանից:*

3. Տրված կադապարներով կազմել երկուական բայ [յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,25 միավոր, ընդամենը՝ 1 միավոր].

*համադրական*

ա.  $a+S+c =$

բ.  $a+S+b+c =$

*վերլուծական*

գ.  $[S+(ad_1)+c+c_2]+C =$

դ.  $[S+d_1+c_1+]+C =$

4. Կազմել հետևյալ բայաձևերի ձևակազմական կադապարը: [Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,4 միավոր, ընդամենը՝ 1 միավոր].

երգ(եց)ե՛ք =

կրնկնեմ =

չդարձա =

մոտենար =

**Ծանոթագրություն: Պայմանական նշաններ.**

**S** – արմատ

**Տ** – հնչյունափոխված արմատ

**Ss** – տարարմատ (տարահիմք) ձև

**a** – քերականական մասնիկ

**b** – կերպածանց

**c** – անորոշի դերբայական վերջավորություն

**c1** – անկատարի դերբայական վերջավորություն

**c2** – ապառնիի դերբայական վերջավորություն

**c3** – վաղակատարի դերբայական վերջավորություն

**c4** – հարակատարի դերբայական վերջավորություն

**c5** – ժխտականի դերբայական վերջավորություն

**d** – կրավորական սեռի ածանց

**d1** – պատճառական ածանց

**e** – հիմքակազմիչ ածանց

**e0** – զրո հիմքակազմիչ

**C** – օժանդակ բայ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աբրահամյան Ա. Ա.*, Բայը ժամանակակից հայերենում, հ. I, Երևան, 1962:
2. *Աղայան Էդ. Բ.*, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
3. *Աղայան Էդ. Բ.*, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ

4. *Ասատրյան Մ. Ե.*, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973:
5. *Ասատրյան Մ. Ե.*, Ժամանակակից հայոց լեզվու, ձևաբանություն, Երևան, 1983 և հաջորդ հրատարակությունները:
6. *Ավետիսյան Տ.Մ.*, Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը // Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1973 էջ :
7. *Գալստյան Մ. Ա.*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:
8. *Գալստյան Մ. Ա.*, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2003, էջ 108-111:
9. *Իշխանյան Ռ. Ի.*, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971:
10. *Խաչատրյան Լ. Մ.*, Բառակազմական և ձևակազմական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան, 2011:
11. *Հովսեփյան Լ. Ա.*, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 51-94:
12. *Նազարեթյան Հ. Ն.*, Ժամանակակից հայերենի բայական բառաձևերի հիմքերը // Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, «Լինգվա», պր. Ե, Երևան, 2006:
13. *Ջահուկյան Գ. Բ.*, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
14. *Ջահուկյան Գ. Բ.*, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջք 11-37, 125-288:
15. *Ջահուկյան Գ. Բ.*, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989: